Համարը	ՀՕ-177-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2014.12.17/69(1082) Հոդ.1171	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	20.11.2014
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	12.12.2014
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	17.03.2015	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող իններորդ օրը, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 15-րդ հոդվածի 1-ին մասի, որոնք ուժի մեջ են մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի նոյեմբերի 20-ին

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՐՄԱՆ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՆԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասությունները

1. Կրծքով կերակրման խրախուսման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) իրավասություններն են՝

1) կրծքով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ ~~վերահսկողությունը և~~ մշտադիտարկումը.

~~2) կրծքով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվության կիրառումը.~~

3) մանկական և վաղ տարիքի երեխաների կաթնախառնուրդների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը:

2. Մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում պետական քաղաքականության մշակումը և իրականացումը.

2) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ ~~վերահսկողությունը և~~ մշտադիտարկումը.

3) սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության հետ կապված, նորմատիվ իրավական ակտերի ընդունումը.

~~4) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվության կիրառումը:~~

«Հոդված 6. 1. Կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավասությունները

1. Կրծքով կերակրման խրախուսման, մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի (այսուհետ՝ վերահսկողություն իրականացնող մարմին) իրավասություններն են՝

1) կրծքով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը և մշտադիտարկումը.

2) կրծքով կերակրման խրախուսման ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվության կիրառումը.

2. Մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում լիազոր մարմնի իրավասություններն են՝

1) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը և մշտադիտարկումը.

2) մանկական սննդի և հարակից ապրանքների շրջանառության ոլորտում օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում պատասխանատվության կիրառումը:

Հոդված 20. Տեղեկատվական և ուսուցողական նյութերը մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների վերաբերյալ

1. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը պետք է՝

1) լինեն հայերենով, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ լեզուներով.

2) պարունակեն ճշգրիտ և արդի տեղեկատվություն և բացառեն որևէ նկար կամ տեքստ, որը խրախուսում է մանկական սննդի և հարակից ապրանքների օգտագործումը, շշով կերակրումը կամ չի նպաստում կրծքով կերակրմանը.

3) հստակ ներկայացնեն հետևյալ տեղեկատվությունը.

ա. կրծքով կերակրման անհրաժեշտությունն ու առավելությունները,

բ. 6 ամիս բացառապես և դրան հետևող շարունակական (երկու տարի և ավելի) կրծքով կերակրման կարևորությունը,

գ. ինչպես սկսել և պահպանել բացառապես և շարունակական կրծքով կերակրումը, ներառյալ, թե ինչու է դժվար փոխել կրծքով չկերակրելու որոշումը,

դ. 6 ամսականից սկսած՝ հավելյալ սննդի տրամադրման կարևորությունը,

ե. շշով կերակրման կամ հավելյալ սննդի վաղ տրամադրման բացասական ազդեցությունը կրծքով կերակրման վրա,

զ. տնային պայմաններում հավելյալ սննդի պատրաստումը:

2. Մանուկների և վաղ տարիքի երեխաների սնուցման վերաբերյալ գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը չպետք է՝

1) ներկայացնեն, թե իբր մանկական սննդով կերակրելը կամ հարակից ապրանքներ օգտագործելը համարժեք է, համեմատելի է կամ գերազանցում է կրծքի կաթին կամ կրծքով կերակրմանը.

2) պարունակեն մանկական սննդի և հարակից ապրանքների ֆիրմային անվանումներ, ապրանքային նշաններ կամ արտադրողի և (կամ) բաշխողի անվանումը, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվությունը տրամադրվում է բուժաշխատողներին:

3. Մանկական սննդով կերակրելու մասին գրավոր, ձայնային կամ տեսողական տեղեկատվական և ուսուցողական նյութերը, բացի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունից, պետք է ընդգրկեն նաև հետևյալ տեղեկատվությունը.

1) հրահանգներ՝ մանկական սննդի պատշաճ պատրաստման և օգտագործման, ինչպես նաև հարակից ապրանքների լվացման և ախտահանման վերաբերյալ.

2) մանկանը կերակրման բաժակով կերակրելու վերաբերյալ.

3) շշով կերակրման և մանկական սննդի ոչ ճիշտ պատրաստման հետ կապված հնարավոր առողջական վտանգները:

4. Կրծքով կերակրումը խրախուսելու ազգային ծրագրով նախատեսված մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերը հրապարակվում են՝

1) լիազոր մարմնի կողմից լիազորված կազմակերպությունների միջոցով տվյալ տարվա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև տեղական և միջազգային ոչ կառավարական գործընկեր կազմակերպությունների միջոցների հաշվին.

2) այլ կազմակերպությունների կողմից՝ նյութերը լիազոր մարմնի հետ նախապես համաձայնեցնելուց հետո:

Լիազորման և նյութերի համաձայնեցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. ~~Լիազոր մարմինն~~ Վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինն իրավունք ունի արգելելու սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող մանկական սնուցման, մանկական սննդի և հարակից ապրանքների մասին տեղեկատվական և ուսուցողական նյութերի հրապարակումը և տարածումը: